№ 7 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 11 — 1908 — ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 11 № 7

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և ազգ օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

քաղաքական եւ գրականական լրագրի

ՆԵՐԿԱՅ 1908 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(36-րդ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 ռուբլի։

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Յովհաննէս Կարապետեան և տիկին Լիւսի Մուրատֆեանները ցաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինը իր եղբօր, երկրորդը իր տաղտ՝ անմոռանալի

Վահրամ Կարապետեան
ՄՈՒՐԱՏՖԵԱՆԻ

մահվան լուրը։ Աւրիծքը կը կատարվի ամսոյս 12-ին, շաբաթ օրը, երեկոյեան 6 ժամին (Գօլովինսկի պրոսպեկտ, տուն Անանեանի, № 20)։ Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ ամսոյս 13-ին, կիրակի, առ. ժամը 10-ին՝ Մողնու ս. Գէորգ եկեղեցին, իսկ թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը։

(ռ. շ.) 2—1

ՄՕՍԿՎԱՅԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

ԵՂԲ. Ա. ԵՒ ԵԱ.

ԱԼԾՎԱՆԳ

→ Պատրաստ սպիտակեղէնի և օժիտեղէնի ←

ԳՈԲԾԱՐԱՆԱՏԷՐԵՐ

Տօնական համար ստացված են

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

գեղեցիկ սպիտակեղէն, վզնոցներ, ժանիէներ, փողպատներ (գալստուկ), բլուզներ և կանանց առաւօտեան զգեստներ (պեռնուարներ)։

ՀԵՌԱԽՕՍ 477, 555.

առ. 10—9

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Այսօր 8-ից 3-րդ արական գիմնազիայում վերսկսվեցին հայերէն լեզուով սիստեմատիկ դասախօսութիւնները նախկին ծրագրով, երեկոյեան ժամը 6½-ից սկսած։ Երեք դասախօսութեան վճարն է 5 կոպէկ։ Մուտքը Վելեամինովսկի փողոցից։

(ա. 3—2

Բացված է բաժանորդագրութիւն

1908 թւի

ՄԱՐԴԱԿԱՆ

Երրորդ տարի

Երգիծաբանական, սատիրական եւ զուսապիպ պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Տարեկան գինը Թիֆլիսում 4 ր., ուրիշ տեղ 5 ր., կէս տարվանը 3 ր., երեք ամսվանը 1 ր. 50 կ., արտասահման 6 ր.։

Կարելի է վճարել եւ մաս մաս

ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՆ ԵՆ՝ Գասպար Կալատուզեանցը, Տմբլաչի Խաչանը, Ղալատչի Մարգարը, Ստորակէտը, Միջակէտն ու Վերջակէտը, Մէֆիստոֆէլն ու Լիւցիֆէրը, Չի Մարգարը, Ստորակէտը, Միջակէտն ու Վերջակէտը, Մէֆիստոֆէլն ու Լիւցիֆէրը, Փալանդուզ Մկօն ու Անփալան Յագօն, Սաթայէլն ու Գօրէգոնսցեանը, Մժեղն ու Մոծակը, Խլէզն ու Կայծակը, Լէօնիդն ու ala-Բաթարը, Աստղն ու Մախաթը, Սադրեն ու Ռանդին, Վրձինն ու Ներկը, Գ. Բաշինջաղեանը և Ալտակունին, Avis-ն ու Սիմօնը, Բոզգաֆն ու Մարկիզ Բրունոն, Շմելինգն ու Գրինեվսկին, Բատէրն ու Մրրկոյեանը, Արգոսն ու Իկը, Գրիչն ու Թանաքը, Բախշն ու Հանաքը և այլն և այլն։

Մասնակցելու խոսք են տուել՝ Դօրոշևիչը, Լև Տօլստոյը, Ամֆիթիատրովը, Գիւ. դը Մոպասանը, Զերօմ Զերօմը, Մարկ Տէյնը, Պարսկից Շահը, Սուլթան Աբդուլ Համիդը, Ճապոնացոց Միկադոն, Զինացոց Բոգդիխանը և շատ ուրիշներ։

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Хатабала„. Արտասահման՝ Redaction „Chatabala“. Tiflis, (Caucase)

Խմբագիրը հրատարակող՝ Սատ. Երիցեանց

(օ. մ.) 8—5

Երեքշաբթի, յունվարի 15-ին,

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Յօգուտ

ԴԱՒԻԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ

Տեղի կունենայ
չորս լեզուով ներկայացում

I

Հայերէն

„ՀԱՄԲՈՅՐԸ“

Կոմ.-ֆէյերիա 1 գործ., հեղ. Թ. դը-Բանվիլի, թարգմ. Եղմէնեանի

Մասնակցում են.—տիկին Դուրեան և պ. Արմէնեան

II

Ֆրանսերէն

„ԱՄՈՒՍՆՈՒ ԲԱՂԴԸ“

(La chauce du mari)

Կոմ. 1 արար., հեղ. Կայյավէի և Ռ. դը-Ֆլէրի

Մասնակցում են.—իշխանուհի Հ. Ի. Զամբակուր-Օրբէլիանի, իշխ. Վ. Վ. Բարիատինսկի, պ. Ա. Արմէնեան, իշխ. Գ. Ա. Բագրատիօն-Մուխրանսկի և Ս. Ա. Անդրէեվ։

III

Վրացերէն

„ԳԻՉԵՐՎԱՑ ՍԱԲԲԸ ԽԷՐ Է“

Կոմ. 1 արար., հեղ. Գ. Սունդուկեանի, թարգմ. Ա. Բաշինձէի

Մասնակցում են.— տ. տ. Գաբունիա-Յագարէլի, Տասսօ-Աբաշիձէ, պ.պ. Աբաշիձէ և Եօրդանով։

IV

Ռուսերէն

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Մասնակցութեամբ՝ տիկ. Լ. Բ. Եավօրսկայի, իշխ. Վ. Վ. Բարիատինսկու, պ. Կ. Ի. Շօրշաէֆի և այլոց։

Սկիզբն է ժամը 8-ին երեկոյեան

Տոմսակները՝ Թատրօնի կասայում.

Կարգադրիչ՝ իշխանուհի Ե. Ի. Զամբակուր-Օրբէլիանի

(Հ. ու. շ. կ. ե.) առ. 5—2

ՎՍՏԱՀ ՔԱՅԼԵՐՈՎ

Ծանր է, հայրենի ժողովուրդ, քո դրութիւնը։ Ծանր է փորձութիւնը, որ քեզ բաժին ընկաւ մեր օրերում։

Դու անտեսապէս քայքայվեցիր. դու բարոյական մեծ հիասթափումների հանդիպեցիր։

Պատմական այն օրերին, երբ վերածնվող կեանքի փողերը բարձրագոչ հնչիւններով աւետում էին արշալոյսի ծագումը, դու ենթարկվեցիր սոսկալի արհաւիրքների, որոնք հալումաշ արին քեզ և ջլատեցին բոլոր ոյժերդ։

Եւ ազէտը, մեծ հասարակական ազէտը եկաւ կանգնեց քո առաջ, թէ իբրև իրականութիւն և թէ իբրև հալածող ուրուական։

Իբրև իրականութիւն՝ նա դարձրել է քո կեանքը վշտալի և սգաւոր, լի զրկանքներով, որոնց ծանրութիւնը զգացվում է ամեն օր, ամեն ժամ։

Իբրև ուրուական՝ նա սպառնում է չը բաւականանալ ներկայի տառապանքներով և վշտերի նոր շարքեր առաջ մղել մերձաւոր տարիներում։

Ի՞նչ պէտք է անել։

Պէտք է արիութիւնը չը կորցնել և գոռ մաքառում սկսել ազէտի քայքայիչ ազդեցութեան դէմ։

Դժբաղդաբար՝ մեզ հասնում են և վհատման ու յուսահատութեան ձայներ։ Մենք տեսնում ենք հոգեկան լման նշաններ մարդկանց մէջ։ Մենք սարսափած ենք արձանագրել դէպքեր, երբ մարդիկ թողնում են տուն ու տեղ երեսի վրա և անյայտանում՝ իրանց մտերիմների տանջանքները չը տեսնելու համար։

Սա աւելի մեծ ազէտ է, քան այն սարսափելի կարիքը և թշուառութիւնը, որոնք մաշում են ժողովրդին։

Վհատութիւնը և յուսահատութիւնը ամենասոսկալին է բոլոր ժողովրդական դժբաղդութիւններից։

Որքան էլ մեծ լինի փորձութիւնը, որքան էլ սրատամաշ լինի տառապանքը, որքան էլ քայքայիչ լինի զրկանքը, այնու ամենայնիւ դրանք բուժելի ազէտներ են, միայն թէ մարդիկ իրանց գլուխը չը կորցնեն և փոխադարձ օգնութեամբ ու գործակցութեամբ բանան շաւիղներ փրկութեան համար։

Միայն թէ վհատութիւն չը լինի։ Որովհետև վհատութիւնը արմատից ցամաքեցնում է ամեն մի յոյսի աղբիւր և թուլացնում մարդկանց բազուկները։

Ոչ։ Դէն պէտք է մղել վհատութեան հեռաւոր ստուերն անգամ։ Որքան էլ մեծ լինի ազէտը, երբէք չը պէտք է վախենալ նրանից, այլ գիտակցելով նրա ոյժը՝ զինվել բոլոր միջոցներով դիմադրելու նրան ուժգնապէս։ Հասարակութեան միացած զրոհով, հաւաքական ջանքերի համագումարով կարելի է շատ մեծ ազէտների առաջն առնել։

Իսկ եթէ մարդիկ, անձնատուր եղած վհատութեան, փոքրոգի կը լինեն և չեն մտնի մաքառման ասպարէզ, այն ժամանակ խիստ կը թագաւորէ ազէտը իր բոլոր արհաւիրքներով երկրի մէջ և վերջնականապէս կը խորտակէ ու կը կործանէ ժողովրդական կեանքը երկար տարիներով։

Երբէք յուսահատութիւն, երբէք թուլութիւն։

Չը վախենանք ազէտի մեծութիւնից և մեր արիութիւնը չը կորցնենք։ Մօտենանք միմեանց և միատեղ ոյժերով ոտքի կանգնեցնենք ժողովրդի ընկած տնտեսութիւնը և կազդուրենք լքված հոգեկան տրամադրութիւնը։

Վստահ, տոկուն և անընկճելի դրծունէութիւնը՝ հիմված հաւաքական ոյժերի սերտ կապակցութեան վրա՝ կառաջնորդէ մեզ զանազան շաւիղներով դէպի կազդուրում և վերաշինութիւն։

Եռանդուն և անձանձիր աշխատանք՝ անհուն հաւատով դէպի նրա ապագայութիւնը—ահա ինչը կը հանէ մեզ դէպի փրկութեան ճանապարհը։

Ա. Քալանթար

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՓՈԽԱՐԲԱՑԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

IV

Բազուի Նահանգապետ Ալիշէվսկին զեկուցեց խորհրդին, որ Բազուի Նահանգի համար պէտք կայ միայն 110,000 ռուբլու, այն է Գեօքչայի գաւառի համար—65,000 ր., Ղուբայի գաւառի—11,000 ր., Ջէվազի գաւառի—16,000 ր. և միւս գաւառների—5000 ր.։

Գանձակի նահանգապետ Կօվալէվը ներկայացրեց մի ընդարձակ զեկուցագիր, որով մի կողմից ապացուցում էր հայ պատգամաւորութեան տեղեկագրի չափազանցված լինելը, միւս կողմից բերում էր իր հաւաքած տեղեկութիւնները։ «Ես չեմ հերքի,—ասաց նա,—որ իմ նահանգում կարիք չը կայ. կարիք կայ, բայց պատգամաւորութեան ցոյց տուած նպաստի գումարը չափազանցված է։ Պատգամաւորութիւնը ցոյց է տուել, որ Գանձակի նահանգի համար 2,200,000 ռուբլի նպաստի պէտք կայ, այն է՝ Զանգեզուրի գաւառի համար—531,606 ռուբլի, Ջուլֆա գաւառի—649,857 ր., Ջէբրայիլի գաւառի—149,745 ր., Ջիվանշիրի գաւառի—205,573 ր., Գանձակի գաւառի—212,316 ր., Ղազախի գաւառի—361,440 ր., Արէշի գաւառի—72,698 ր., Նուխու գաւառի—52,596 ր.։ Արդ, Գանձակի նահանգի ազգաբնակութիւնը բաղկացած է 268,000 հայերից և 500,000 թուրքերից. եթէ հայերի համար պահանջվում է 2,200,000 ռուբլի, ուրեմն թուրքերի համար պէտք է պահանջել կրկնապատիկը, այն է 5,000,000 ռուբլի. հետևաբար ամբողջ նահանգի համար պէտք է յատկացնել նպաստ 7,000,000 ռուբլի։ Այդ թիւանշանները ճիշտ չեն. իմ ձեռքակալելու հետ զուգընթացաբար ունեցած ճշգրիտ տեղեկութիւններով ընդամենը պէտք կայ ամբողջ նահանգի համար ուտելիքի և սերմացուի՝ 485,250 ռուբլու, այն է՝ Ջիվանշիրի գաւառի համար—126,000 ր., Գանձակի—90,446 ր., Ջուլֆա—46,000 ր., Զանգեզուրի—200,000 ր. և Արէշի—14,000 ռուբլի»։

Ապա Նահանգապետ Կօվալէվը տեղեկացրեց, որ ամբողջ նահանգում գիւղերին յատաձգված է հարկերի վճարումը 276,000 ռուբլու։

Ել. Քալանթարի, Ս. Յարութիւնեանի և Յ. Խուտնունցի հերքումներից, առարկութիւններից և հաղորդած նոր տեղեկութիւններից յետոյ, նահանգապետ Կօվալէվը համաձայնեց, որ իր ցոյց տուած գումարը կարելի է կրկնապատկել և նոյնիսկ հասցնել մինչև մի միլիոն ռուբլու։

Եւ այդպէս բոլոր նահանգների մասին զեկուցումները և թեր ու դէմ կարծիքները, առարկութիւնները և հերքումները լսելուց յետոյ, խորհուրդն անցաւ հետեւեալ հարցերի լուսաբանութեան. 1) նպաստը քանի՞ ամսի համար պէտք է հաշվել. 2) ինչպէս կազմակերպել նպաստների բաշխումը. 3) քանի՞ տարի ժամանակով տալ նպաստը. 4) կան տեղական միջոցներ՝ բարեգործական, հասարակական շտեմարանների և այլն. 5) ինչ ձևով տալ նպաստը—դրամով, թէ ցորենով, ալիւրով. 6) ինչպէս բաժանել—ծխերին տալ, թէ անհատներին. 7) հարկաւոր է կազմակերպել հասարակական աշխատանքներ և ինչ ձևով։

Հ. Ա.

(Կը շարունակվի)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս.—Լուսերինն այած, պարսից առաջին սահմանագլխային պատգամաւորը ներկայացաւ Ուրմիայում շատ վատ դրութեան մէջ է գտնվում։ Ռուսաց գեսպան Զինովիէվը Բ. Դրան յայտարարագիր ներկայացրեց սահմանագլխում տեղի ունեցած վերջին միջնադէպերի մասին։ Պարսիկ հաւատարմատարը պիտի է շուտափոյթ պատասխան տալու վրա և տեղեկութիւն է ստացել, որ Բ. Դուռը հրաման է արձակել սահմանագլխում յետադայ գործողութիւնները դադարեցնելու։

Կ. Պոլիս.—Բաղդադի զօրքերին օժանդակելու համար նշանակված զինուորական արշաւախումբը 36 Կրուպի դաշտային և լեռնային թնդանօթներով, 19000 Մաուզէրի հրացաններով և 2000 արկղ ռազմամթերքներով, ցամաքային ճանապարհով հասաւ Հալէպ։

Սերբիական և բուլգարական պաշտօնական հաղորդագրութիւնները յայտնում են, որ Դրագօկլարէսում մասսայական սպանութիւնները կատարվել են յունական հրոսակախմբի ձեռքով։ Թիւրքաց պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, Դրագօկլարէսում կոտորած սարքել է ոչ թէ յունաց, այլ բուլգարական հրոսակախումբը։ Բերդապարը պաշտօնից հրաժարեցրված է։

Կ. Պոլիս.—Բաղաքում պատահած խոշորայի եօթ դէպքեր, բժշկական քննութիւնից յետոյ, ասիական խօլերա երևացին։ Ուխտերորդ դէպքը տեղի ունեցաւ Հայդար-փաշա կոչված արուարձանում։

Յունվարի 3-ին Մեկիայում խոլերայից մեռել են 338 հոգի, Մէդինէում յունվ. 5-ին 504 հոգի։

Պարիզ.— Ի նկատի ունենալով պարսկի կառավարութեան խնդիրը, որ նրա տրամադրութեան տակ մի ֆրանսիացի պաշտօնեայ ուղարկվի՝ ֆրանսիական ֆինանսները վերակազմելու գործում աջակցութիւն ցոյց տալու համար, ֆրանսիական կառավարութիւնն այդ նպատակով նշանակեց ֆինանսների տեսուչ Բիզօրին, որին տուեց ֆինանսական խորհրդատուի կոչում։

Ժընէվ.—Միւնիխնում ռուսներին ձերբակալելու հետ զուգընթացաբար

տեղումս ձերբակալեցին նրանք ռուս տէրրորիստների։

Բելին.—Առաւօտեան տեղի ունեցան գործադուրկների ժողովները։ Ժողովներին մասնակցում էին մօտ 12000 հոգի։ Բէյխստագի սոցիալ-դեմոկրատ պատգաւորները ճառեր արտասանեցին պետութեան և համայնքների վրա դրված պարտականութիւնների մասին առաջիկայ գործազրկութեան օրերում։ Ամենուրեք գրված էին զօրքեր։ Գործադուրկները սկզբում ցրվեցին հանգիստ, բայց կէսօրից յետոյ, փողոցում, բէյխստագի շինութեան հանդէպ, նրանց և ոստիկանութեան միջև ընդհարում տեղի ունեցաւ։ Նոր կառուցվող թատրոնի մօտ ոստիկանութեան վրա սկսեցին աղիւսներ շպրտել։ Հեծեալ և հետեակ ոստիկանութիւնը ցրեց ամբոխը։ Մի քանի մարդիկ վիրաւորված են։

—

«Кассій» լրագրի թղթակիցը հետեւալ տեղեկութիւններն է հաղորդում Պետերբուրգից.

Ձերբակալվեց և բանտ դրվեց 1-ին Պետական Դումայի անդամ աշխատաւոր Մերկուլովը։ Ոչ մի մեղադրանք յայտնված չէ։

Պետական Դումայի նախագահ Խոմեակովը, լրագիրների թղթակիցների հետ խօսակցելու ժամանակ, յայտնեց, որ պատգամաւոր Կոլիւբակինին յանձնելու մասին վիճաբանութիւններ տեղի կունենան, բայց հետեանքները չէ կարելի նախատեսել։ Իսկ Բոդիշէվի վերաբերութեամբ նա ասաց, որ ցանկալի է նրան վերադարձնել մինչև ժամանակամիջոցի լրանալը, բայց դժուար է մի որևէ միջոց հնարել, որ Բոդիշէվի համար վիրաւորական չը թուայ։

Պատգամաւոր պրոֆ. Միլիւկովի պատին Նիւ-Եորկում կայացել է մի ահագին ճաշկերոյթ, որին ներկայ են եղել 200-ից աւելի պատգամաւորներ, մինիստրներ և Միացեալ-Նահանգների նախագահ Ռուզվէլտը։

Դրամատուրգ Վ. Գրոտոպոլովը («Սև ագռաւներ» պիէսայի հեղինակը) մի նամակ է ուղարկել Իսան Կրոնշտադտկուն, որով խնդրում է նրան զրականապէս յայտնել՝ համերաշխ է արդեօք նա իսանիտների հետ թէ ոչ։

—

Թիւրքահայաստանի դրութիւնն օրըստօրէ աւելի ծանր ու աւելի անտանելի է դառնում։ Սովը սոսկալի չափեր է ընդունել, և կենսական մթերքների գներն անասելի բարձրացել են։ Սացված տեղեկութիւններից պարզվում է, որ եթէ շուտափոյթ օգնութիւն չը հասնի սովատանջ ժողովրդին, ձմեռը չը վերջացած Մուշի դաշտում և Բուլանիկում սովամահութեան հարիւրաւոր դէպքեր կը պատահեն։ Էրզրումի վիլայէթումն էլ սովը իր թաթը դրել է։

Հայաստանից և առհասարակ Արևելեան Թիւրքիայից ստերիկեան բարեգործական հաստատութիւններին հասած տեղեկութիւնները խիստ սրտաճմլիկ ու երկիւղալի են հաղորդում այդ վայրերում տիրող սովը։

Խարբերդից հաղորդված լուրերի համաձայն, պանդխտող հայերի շարաններն անդադար ուղղվում են դէպի Սամսօն՝ Ամերիկա գաղթելու համար։ Պանդխտողներն առոյգ ու երիտասարդ են և ներկայացնում են այդ երկրի ամենից զօրաւոր տարրը։ Հաւաստում են, որ 1907 թ. ապրիլից սկսած մինչև վերջերս՝ Խարբերդի շրջակայքից գաղթել են 1200 ընտանիք։

Ամերիկացի մի թղթակից գրում է, թէ գաղթականական այս հոսանքը չափազանց մեծ վնասներ պիտի պատճառէ տեղական հայկական հաստատութիւններին, ինչպիսիք են եկեղեցիները, դպրոցները և այլն, որովհետև պանդխտողները հաղիւ թէ յետադարձում հնար ունենան իրանց հայրենիք վերադառնալու, իսկ երկրում մնացողներն էլ առհասարակ գրեթէ անկարող են նիւթապէս օգնելու այդ հաստատութիւններին։

ՀԱՆԴԱՆԱԿԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

—

Շաբաթ, յունվարի 9-ին, կայացաւ ի նպաստ Թիւրքական Հայաստանի հայ տառապեալների Հանգանակիչ Մասնաժողովի նիստը, նախագահութեամբ պ. Ալ. Մելիք-Ազարեանցի և մասնակցութեամբ անդամների—պ.պ. Ալ. Քալանթար, Սամսոն Յարութիւնեան, Հ. Առաքելեան, Գ. Կաֆեան, բժշ. Կ. Ստեփանեան և Տ. Զաւէն։

Այդ նիստում քարտուղար Հ. Առաքելեան զեկուցեց, որ հրաւէր են ուղարկված, համաձայն Մասնաժողովի որոշման, զանազան հայաբնակ կենտրոններում ապրող ազդեցիկ և հեղինակաւոր անձանց՝ ազակցել Մասնաժողովին, տեղական հանգանակիչ մասնաճիւղեր կազմել և հանգանակութիւն բանալ ի նպաստ Հայաստանի մեր թշուառ եղբայրակիցների։ Բացի դրանից Կ. Պոլսի պատրիարք Օրմանեան սրբազանին և նրա միջոցով թեմական առաջնորդներին դիմում է արված փաստացի և ճշգրիտ տեղեկութիւններ հաղորդելու Հայաստանում տիրող սովի և կարօտութեան վայրի, քանակի և աստիճանի մասին։

Գանձապահ Սարուխանեան զեկուցեց, որ մինչև այսօր նա ստացել է թէ ուղղակի, թէ «Մշակի» խմբագրութեան և թէ Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովի ձեռքով նուէրներ ընդամենը 3573 ռուբլի։

Մասնաժողովը որոշեց, համաձայն ընդհանուր ժողովի որոշման, շուտով մի մեծ ժողով գումարել հայ հասարակութեան զանազան խաւերի ներկայացուցիչներից՝ խորհրդակցելու թէ ինչպէս տելի մեծ ծաւալ և տարածում տալ հանգանակութեան գործին, այլև նորից դիմումն անել այն անձանց, որոնց հրաւէր է ուղարկված՝ եռանդով գործել ի նպաստ Հայաստանի սովեալների։

ԴԷՊՔԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

II

Միանդաբ, 19 դեկտեմբերի

Այսօր, դեկտ. 19-ին, Ֆարման-Ֆարմայի հրամանատարութեան տակ գտնվող զօրքը (թէ հեծեալ և թէ հետեակ՝ 500 հոգի), առանց սպասելու Բէյհիմ-խանի զօրքերի ժամանմանը, որոնք պէտք է հանդիպէին Մէլիք-զէնդից, հրաման ստացաւ գինավարժութիւն անելու։ Իւրաքանչիւր զինուորի թոյլատրված էր 2 փամփուշտ փչացնել։ Զինավարժութիւնը տեղի ունեցաւ մինչև կէսօր։

Ճաշից առաջ՝ թիւրքական զօրքերի հրամանատար Մէհմէդ Ֆազիլ փաշայի կողմից մի սուրհանդակ եկաւ Ֆարման-Ֆարմային ներկայանալու։ Սուրհանդակ Ալի-էֆէնդուն ընկերակցում էին մի քանի ձիաւորներ։ Սուրհանդակը Ֆարման-Ֆարմային յանձնեց Մէհմէդ-Ֆազիլ փաշայի մի նամակը և արժանացաւ պարսիկ հրամանատարի կողմից պատիւների։ Սուրհանդակը Ֆարման-Ֆարմայի մօտ մի ժամ մնալուց յետոյ՝ ճանապարհվեց դէպի թիւրքական բանակատեղը։ Խիստ գաղտնի է պահվում պարսիկ հրամանատարի՝ Մէհմէդ Ֆազիլ փաշայի նամակին տուած պատասխանը։ Իսկ փաշան իր նամակում խնդրում է Ֆարման-Ֆարմային՝ զինու զօրութեամբ չը մտնել Սօվուջ-Բուլաղ։ Բանն այն է, որ քիւրդ աղաները երբ տեսնում են, որ Սօվուջ-Բուլաղի գաւառը փախել է, դիմում են փաշային և խնդրում գրաւել այդ քաղաքը։ Փաշան պատասխանել է, թէ ինքն այդպիսի քայլ անելու հրաման չէ ստացել։ Աղաները, վախենալով պարսիկ կառավարութեան պատժից, խնդրում են փաշային գոնէ պաշտպանել իրանց՝ պարսիկների վրէժխնդրութիւնից։ Այդ խնդիրքն էլ է մերժվում, բայց փաշան խոստանում է հնար եղած չափով աշխատել միջնորդելու աղաների և պարսիկ կառավարութեան միջև։

Հաւատի աղբիւրից տեղեկացրին ինձ այսօր, որ Սօվուջ-Բուլաղի խաներն ու աղաները ժողովվել են մի քանի անգամ և խորհրդակցութիւն են ունեցել։ Միայն՝ յայտնի չէ, թէ այդ խորհրդակցութեան միջոցին ինչ վճիռ են ընդունել՝ արդեօք անձնատուր լինելու թէ միացեալ ոյժերով կառավարութեանը դիմադրելու։ Կարծվում է, թէ, վերջին դէպքում, Ֆազիլ փաշան իր զօրքերից որոշ թիւով մարդկանց ծպտեալ շորով կը խառնէ քիւրդերին՝ պարսիկ կառավարութեան դէմ կռուելու համար։

Թիւրքական զօրքերի հրամանատարի կողմից ուղարկված սուրհանդակը հէնց որ մեկնեց Ֆարման-Ֆարմայի մօտից, վերջինս անմիջապէս իր մօտ կանչեց իր բանակի սպաներին և նրանց պատուիրեց հէնց վաղվանից իսկ պատրաստ լինել, որովհետև բանակը հետեւալ օրն անպատճառ պէտք է շարժվի դէպի Սօվուջ-Բուլաղ։ Նորին բարձրութիւնն ապա կարգադրեց անյապաղ ուղղել ու կարգի բերել մինչև Սօվուջ-Բուլաղ հեռագրական սիւները, որոնք վերջերս խորտակված էին։

Շ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՕՐՍԱՆ

—

1908 թուականի նոր-տարին մի շատ կարևոր ու թանգագին ընծայ բերեց Թիֆլիսին ու ամբողջ Անդրկովկասին. դա ամսոյս 8-ին Թիֆլիսում բացված բօրսան է։

Հաւատացած ենք, որ մեր ընթերցողներից շատ-շատերը, ծանօթ լինելով հանդերձ բօրսա բառին, բոլորովին հակացուցութիւն չունեն այդ հաստատութեան ու նրա կատարած կամ կատարելիք դերի մասին։

Թէև բօրսան արդէն անգամ անցեալ ունի տնտեսապէս ու քաղաքականապէս զարգացած երկիրներում, բայց և այնպէս նա այն նորագոյն հաստատութիւնների շարքին է պատկանում, ինչպիսին են այժմեան խորհրդարանները, երկաթուղին, շոգենաւը, հեռագիրը, հեռախօսը և այլ այն բոլոր հաստատութիւնները, որոնք կապիտալիստական շրջանի անհրաժեշտ պարագաներն են կազմում։

Բօրսան, իրաւէս, մեր արդի կապիտալիստական շրջանում նոյն դերն է կատարում, ինչ որ նախակապիտալիստական շրջանում կատարում էին և դեռ մինչև օրս էլ շատ տեղերում շարունակում են կատարել տօնավաճառները։ Ցայտնի է, որ տօնավաճառները հաստատված են եղել այն նպատակով, որ թէ մանր արդիւնագործներին և թէ վաճառականներին դիւրութիւն ընծայվէր իրանց առուտուրը հեշտութեամբ կատարելու. փոխանակ՝ արհեստաւորը կամ այս ու այն նիւթը արդիւնաբերողը իր տանը նստած գնող վաճառականին սպասէր, և փոխանակ՝ վաճառականը քաղաքից քաղաք ու գիւղից գիւղ պտտէր ու իրան պէտք եղած ապրանքը որոնէր, նրանք պայմանաւորվում էին, որ տարվայ մէջ մի կամ երկու անգամ, որոշ օրերին, նրանք երկուսն էլ՝ թէ արտադրողը և թէ գնող վաճառականը մի տեղ հաւաքվէին, առաջինը իր հետ բերելով իր ունեցած ապրանքը, իսկ երկրորդը՝ իր փողը, և այնտեղ կատարէին իրանց առուտուրը։

Այդ էր տօնավաճառի սկզբունքը, և նա չափազանց մեծ յարմարութիւններ էր տալիս թէ արդիւնաբերողին և թէ գնողին ու խիստ նպաստում էր վաճառականութեանը. արհեստաւորը մի քանի ամսվայ ընթացքում իր շինած ապրանքները դարսում էր մի կամ մի քանի սայլերի վրա, բերում էր տօնավաճառ, մի քանի օրվայ մէջ ծախում վաճառականին, ստացած փողերով հէնց այդտեղ էլ իր համար հում նիւթ էր գընում և վերադառնում տուն, յաջորդ տօնավաճառի համար նոր ապրանք պատրաստելու։

Սակայն, արդիւնագործութեան ու կապիտալիզմի զարգանալովը՝ զարգացաւ և սպառումը, ապրանքների թէ քանակը և թէ տեսակները. այլևս անհնարին դարձաւ հազարաւոր վագոններով դիզված ապրանքները տօնավաճառի շուկան տանելը, անհնարին և նոյնիսկ բոլորովին ձեռնտու չէ ամիսներով տօնավաճառի օրերին սպասելը։ Հակայական քայլերով աճող կապիտալիզմն ու արդիւնագործութիւնը պահանջում էին, որ ամեն բան կատարվի շատ արագ և շատ մեծ չափերով։ Ուստի անհրաժեշտութիւն էր զգացվում հիմնելու մի այնպիսի նոր տեսակի և կատարելագործված տօնավաճառ, որը գործէ ոչ թէ տարէնը մի-երկու անգամ, այլ ամեն օր, և որը այնպէս կազմակերպված լինի, ուր արդիւնագործները տարված չը լինեն իրանց ապրանքները հեռները բերելու և կամ նոյնիսկ անձամբ ներկայ լինելու։ Ահա հէնց այդ նորագոյն տեսակի տօնավաճառն է, որ կոչվում է բօրսա։

Բօրսան պետական հաստատութիւն է, ունի կառավարութեան կողմից հաստատված իր կանոնադրութիւնը, ընտրվի վարչութիւնը և մակլերները, որոնց պարտաւորութիւնն է հսկել բօրսայում կատարված առուտուրի կանոնաւորութեան վրա։ Բօրսայի վարչութիւնը մինչև ճշգրիտ տեղեկութիւններ է հաւաքում և հաղորդում այս ու այն արդիւնաբերութեան օրվայ գների մասին, որոնց համաձայն էլ մարդիկ կատարում են իրանց առ ու ծախը։ Բօրսան ամեն օր բաց է լինում որոշ ժամերին, և իրաքանչիւր օր մի-երկու ժամվայ ընթացքում տասնեակ միլիոնների առուտուր կարող է կատարվել։ Շատ անգամ բոլորովին հարկ էլ չէ լինում, որ գնողն ու ծախողը անպատճառ անձամբ ներկայ լինեն բօրսայում իրանց կատարած առուտուրի ժամանակ. նրանք, եթէ առուտրական աշխարհին յայտնի մարդիկ են, կարող են իրանց ծախելու և գնելու գիտաւորութեան մասին հեռագրով կամ հեռախօսով յայտնել բօրսայի վարչութեանը ու սրա միջոցով կատարել իրանց առ ու ծախը, առանց իրանց տեղերից շարժվելու։ Այդ ձևով առուտուրը կատարվում է, ի հարկէ, յայտնի և որոշ ապրանքների վերաբերեալ. իսկ այն դէպքում, երբ ապրանքը կամ նրա վաճառողը դեռ ևս յայտնի չեն շուկային, վաճառողները բաւականանում են իրանց ապրանքի նմուշները ուղարկելով միայն։ Բօրսան ահագին գործեր է կատարում զանազան արժէքների վերաբերեալ, և հէնց այդտեղ է, որ նա ամենայն պարզութեամբ ցոյց է տալիս իր՝ մի կողմից խիստ քայքայիչ, իսկ միւս կողմից շինիչ դերը. բօրսային այդ կարգի խաղերում հարիւրաւոր ու հազարաւոր մարդիկ ընդամենը մի ժամվայ ընթացքում կորցնում են իրանց վերջին կոպէկները, իսկ միւսները ահագին միլիոններ են վաստակում։ Եւ ի հարկէ, վաստակողը միշտ աւելի հարուստ է, իսկ կորցնողը աւելի պակաս ունորը։

Բօրսան, խոշոր ու զարգացած կապիտալիստական շրջանի անհրաժեշտ հաստատութիւն լինելով հանդերձ, միևնոյն ժամանակ չափազանց նպաստում է երկրի կապիտալիզմի ու արդիւնագործութեան զարգանալուն։ Եւ հէնց այդ տեսակէտից պէտք է ենթադրել, որ նոր բացված Թիֆլիսի բօրսան շատ մեծ դեր պիտի կատարի Անդրկովկասի արդիւնագործութեան ու արդիւնաբերութեան զարգացման գործում և կարագացնի մեր երկրի դասակարգային դիֆերենցիացիան, որը, դժբաղդաբար, դեռ շատ դանդաղ է կատարվում։

Ֆ.-Աղամ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

—

✦ Ժողովրդական ազատութեան կուսակցութեան Մօսկվայի կոմիտէի անդամների միջև վերջին օրերս խուզարկութիւններ են կատարվել՝ նպատակ ունենալով պաշտօնապէս երևան հանել այդ անլեզու քաղաքական կուսակցութեան և նրա կազմակերպութիւնների գոյութիւնը։ Խուզարկութիւնների ժամանակ գտնված նիւթերը հաստատում են, որ նրա քաղաքական կոմիտէի բոլոր անդամները պատկանում են յիշեալ անլեզու կուսակցութեան։ «Нов. Вр.» լրագրի ասելով, ստացված փաստերի հիման վրա, մտադրութիւն կայ այդ անձանց օրինական պատասխանատուութեան ենթարկել իբրև գաղտնի ու ապօրէն ընկերութեան պատկանողներ։

✦ Ֆինլանդական սոց.-դեմոկրատների միջև ներկայումս նկատվում է բեվիդիոնիստական ուժեղ հոսանք, որը ձգտում է կուսակցութիւնը աւելի ևս ամրակապ դարձնել մօտեցնել իրար հետ նրա «ստորին» ու «բարձր» խաւերը և մասնակից դարձնել առաջիններին կուսակցութեան գործերի կառավարութեան ու գործունէութեան ուղղութեան ընթացքի մէջ։ Այդ փոփոխութիւնը ամենևին չէ նշանակում, որ կուսակցութիւնը սկսում է կազմալուծվել։ Դա բնական երևոյթ է հանդիսանում այն տեղերում, ուր կուսակցութիւնը բացարձակ կիրպով մտնում է քաղաքական ազատ գործունէութեան շրջանը, որովհետև այդպիսով հնարաւորութիւն է տրվում նրա բոլոր տարրերին, սկսած տօրիներից մինչև վերինները, զարգանալու և ինքնորոշելու, հնարաւորութիւն է տալիս նրանց յայտարարելու իրանց իրաւունքը հաւասար չափով մասնակցելու կուսակցութեան գործերին և անմիջական կերպով ներգործելու ֆինլանդական պետական կեանքի ռամկավարական կազմի վերաշինութեան վրա։ Դրանով է բացատրվում բանւորական կազմակերպութիւնների ընդհանուր ժողովի, որ տեղի ունեցաւ մօտ օրերս Հելսինգֆօրսում, նոյնպէս և Նիւլանդեան ընտրողական շրջանի սոց.-դեմօկրատների ժողովի ազմկալի լինելը։ Վարչութիւն ընտրելու համար գումարված ընդհանուր ժողովում սկսացել են սոց.-դեմօկրատիայի ամենայայտնի ներկայացուցիչներից շատերը, գլխաւորապէս ինտելիգենցիայից, և նրանց փոխարինել են գործունեայ բանւորներով։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՅԹ ՇԱՀԱԶԻԶԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

—

Արմաւիր, 4 յունվարի

Ներկայ 1908 թ. յունվարի 1-ին Արմաւիրի հայ օրիորդաց դպրոցի դահլիճում, բազմաթիւ հանդիսատեսների ներկայութեամբ, կատարվեց հոգեհանգիստ և ապա գրականական ցերեկոյթ հանդուցեալ բանաստեղծ Մեծատ Շահազիզի յիշատակին։

Նրա հնգադոյն աշակերտներից մէկը՝ պ. Կոսիկեան պատմեց նրա կենսագրութիւնը և բարեմասնութիւնները իբրև արդիւնաւոր և համակրելի ուսուցչի, իբրև ազգային բանաստեղծի։

Ուսուցիչ պ. Տէր-Պողոսեան նկարագրեց նրա խարակտերիստիկան, իբրև հետեւող Ս. Նազարեանի հրատարակած «Հիւսիսափայլ» ամսագրի ազատամիտ ուղղութեան, իբրև զինակից Մ. Նալբանդեանի ազատագրական հոսանքի, իբրև տենդենցիօզ բանաստեղծի, իբրև 60—70 թուականների ազատամիտ գաղափարների համար մարտնչող բանաստեղծի՝ հին գաղափարների դէմ, իբրև անաչառ հրապարակասօսի։

Պ. Մատենեան արտայայտեց այն միտքը՝ թէ հանդուցեալը վաղուց դադարել էր գործելուց և նա ժոռացութեան էր մատնված իբրև հեղինակ։

Մէջ ընդ մէջ երգում էր ուսուցիչարանի երգեցիկ խումբը պ. Շահանեանի ղեկավարութեամբ և դաշնամուրի ներդաշնակութեամբ։ Կարդում էին նրա բանաստեղծութիւններից հատուածներ՝ թէ հայերէն և թէ ռուսերէն։ Նրա երգերից երկու օրիորդ երգեցին դուէտ, որ խիստ մեծ հիացումն պատճառեց հանդիսականներին։ Բոլոր մասնակցող ճառախօսները, կարդացողները և երգողներն արժանացան ծափահարութեան։

Հանդէսը վերջացաւ բժիշկ Սեֆէրեանի առաջարկութեամբ՝ ընտրել մի մասնաժողով և խնդրել նրան նուիրաբերութիւնների միջոցով մի գուժար հանգանակել Արմաւիրում յօգուտ հայ հեղինակների հաժարի կազմվելիք ֆօնդին, նամանաւանդ որ հանդուցեալ բանաստեղծ Շահազիզը պաշտպան էր մի այդպիսի գաղափարի և նա ինքը հիմք էր դրել հիմնադրամի կազմութեանը։

Ցարգելի բժշկի առաջարկութիւնը ընդունվեց մեծ համակրութեամբ և որոշվեց առանձին ժողով գումարել ազդեցիկ և գործունեայ անձնաւորութիւններից՝ ի կատար ածելու վերոյիշեալ համակրելի առաջարկութիւնը։

Դիտակ

ՊԵՂԵԳԷ ՍԻՄԷՕՆԵԱՆ

—

Երկու շաբաթ առաջ, դեկտ. 20-ին, Ֆրժաւիրում ծանր հիւանդութիւնից յետոյ մեռաւ իր մահկանացուն մի բազմամեայ վաստակաւոր հայ ուսուցչուհի՝ տ. Պեղեգէ Սիմէօնեան։

Հանդուցեալը մինն էր այն տիպիքական ուսուցչուհիներից, որոնք իրանց ամբողջ էութեամբ նուիրված են լինում դպրոցին։ Մի ամբողջ քառորդ դար անընդհատ վարում էր ուսուցչուհու պաշտօն Ախալցխայի Եղիսաբէթեան օր. ուսումնարանում։ Մի հաղուագէպ երևոյթ, որ մի հայ վարժուհի մի գաւառական քաղաքում և միևնոյն դպրոցում ծառայէր 25 տարի։

1905 թուին, ազգային դպրոցական անիշխանութեան ժամանակ, հակառակ իր ցանկութեան, ուսուցչուհի Պեղեգէն թողեց իր հայրենի քաղաքը և զգուշալով հեռացաւ այն խեղդող մթնոլորտից, ուր գործում էին մութ ոյժերը։

Ինքնուրոյնութիւնից զուրկ Ախալցխայի այն ժամանակվայ հոգաբարձութիւնը, երևի ճնշման և սպառնալիքների տակ, ստիպված էր հեռացնելու Պեղեգէին ուսուցչական պաշտօնից։

Արժաւիրը հիւրընկալեց նրան և Արժաւիրի հայ դպրոցը՝ ուսուցչութիւնը և աշակերտութիւնը թաղեց տանջված հայ ուսուցչուհուն՝—կատարելով նրա 25-ամեայ ուսուցչական յօբելեանը յուղարկաւորութեան հանդէսով։ **

Արժաւիր, 4 յունվ.

ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ՄԱՆՐ ՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

—

Միակ մխիթարական երևոյթը Սուրմալուում մանր վարկի ընկերութիւնն է, որը երկրորդ տարվայ կիսին 700 անդամ ունեցաւ, և, եթէ չարամտորէն խանգարողներ չը լինէին, բոլոր գիւղացիութիւնը այդ ընկերութեանը միացած կը լինէր։ Անցեալ ու այս տարվայ ծանր պայմանների ժամանակ՝ յիշեալ ընկերութիւնը իր գիւղացի անդամների համար փրկարար հրեշտակի դեր կատարեց, Բայց դառն է հայկական իրականութիւնը։ Սատրաքարշ մարդիկ ուզեցին այդ ընկերութիւնը իրանց շահի համար մի հաստատատեղի սիւն շինել և աւելի քան 700 գիւղացի անդամներին իրանց քըմահաճոյքով շարժել, սեփական շահի համար ծառայեցնել, ընկերութեան իսկական դարդ ու ցաւը բոլորովին մի կողմ թողած։ Դերակատարները՝ քիչ փոփոխութեամբ նոյն մարդիկն էին, որոնց մասին յիշված է «Մշակի» անցեալ տարվայ համարներից մէկում)։ Գիւղացիները շուտ հասկացան սուտ ճգնաւորների կեղծիքը և կեղծաւոր փարիսեցիներին դուրս վռնտեցին։ Իսկ պատճառով Բնարլու, Ալիզամարլու, Էվզիլար և միւս գիւղացիները տարիներ շարունակ աքնելով՝ վարում, ցանում, հնձում, կալսում, ահագին քանակութեամբ բերք էին արդիւնաբերում, բայց կալը վերջանալուց՝ առանց ցորենի մի քանի գործիքներ միայն տուն էին տանում, դարձեալ մնում էին քաղցած, առանց սերմի, և ստիպվում էին պարտքերի դիմել։ Գիտենս, ընթերցող, թէ ինչ տաժանակիր աշխատանք է յուլին և օգոստոս ամիսներին, կիզիչ արեգակի տակ, մեր գեղջկուհու համար բարակ մը շակել, քաղհան անելով՝ բամբակ արդիւնաբերել։ Գալիս են նոյեմբեր և դեկտեմբեր ամիսները, երբ ամեն գիւղից շարան-շարան ուղտերի, ֆուրգոնների կարաւաններ են դուրս գալիս բամբակի բեռներով։ Հաւրիւր հազարներ է ձեռքից-ձեռք անցնում, իսկ բամբակ արդիւնաբերող գեղջկուհին դարձեալ մերկ է, ցնցոտիներով պարուրված։

Վաղուց գիւղացին խալվարին խալվար վերադրով (60 պուդ) ցորեն էր պարք առել և իր բազմանդամ գերդաստանին կերակրել, որի համար իր արտից ստացած բոլոր ցորենը տուել իրան պարք տուող դրացուն և ինքը դարձեալ սոված մնաց. վաղուց նա իւռմանիր 6—7—8 ր. փոխարէն պարտաւորվել էր մի-մի պուդ բամբակ տալ, որ պարք էր առել՝ պետական հարկը և միւս կարիքները հոգալու, որի փոխարէն նա տուեց ամբողջ ամառ արիւն քրտինքով արդիւնաբերած բամբակը և ինքը մերկ մնաց։ Նրան ստոր տեսակի՝ քաղայի բամբակը մնաց, որը նա փոխեց նոյնպէս ստոր տեսակի բրինձի հետ։ Այդ է նրա մերկ մխիթարութիւնը ամբողջ տարվայ չարչարանքից յետոյ։

Շարան-շարան բամբակի քարվանները ուրախացնում են Մօրօզովին ու Կոնշինին և նրանց տեղացի միջնորդներին, որոնք, ֆունտը 26—25 կօպ. առնելով, տանում և, ստոր տեսակի չթեր պատրաստելով, վերադարձնում են նոյն գիւղացուն և դեռ ֆունտին էլ 2—3—5 ռուբլի վերադիր պահանջում։

Այդպէս չեղաւ այս տարի Սուրմալուի մի քանի գիւղերում, որոնց մեծ մասը Ս. մ. վ. ընկ. անդամ էին։ Սրանք այլ ևս խալվարին խալվար վերադիրով ցորեն չառան և զգալի չափով ամառական առաջադիմութիւն արեցին. հէնց օրինակ Ալիղամարլու գիւղի 70 անդամները 4200 ր. օգուտ ունեցան նրանով միայն, որ վերադրով ցորեն չառան, որովհետև իրանց ընկերութիւնից փոխառութիւն անելով 4200 ռուբլի՝ փոխարէնը 126 ռուբլի միայն տոկոս վճարեցին։ Ընթերցողին եմ թողնում տարբերութիւնը հասկանալ թէ այսպիսի փոխառու ընկերութիւնները ինչպիսի ինքնօգնութիւն են մատուցանում գիւղացուն։ Սրա օգտաւէտութեան մասին անելորդ եմ համարում խօսել, որովհետև բոլորը գիտեն, թէ արեգակի ջերմութիւնը ինչ օգուտ է տալիս բուսականութեանը, երբ անհրաժեշտ սաղմեր ունենայ։ Սակայն չեմ կարող չը մատնանշել այն վանդալական արշաւանքը, որ մի քանի կամակալի ազնութիւն ունեցող պարոններ սկսել են գիւղացու այդ միակ ինքնօգնութեան միջոցը խորտակելու համար։ Ո՛չ մի տարբերութիւն։ Ինչպիսի ինքնօգնութիւն մատուցանեն գիւղացուն։

Սրա օգտաւէտութեան մասին անելորդ եմ համարում խօսել, որովհետև բոլորը գիտեն, թէ արեգակի ջերմութիւնը ինչ օգուտ է տալիս բուսականութեանը, երբ անհրաժեշտ սաղմեր ունենայ։ Սակայն չեմ կարող չը մատնանշել այն վանդալական արշաւանքը, որ մի քանի կամակալի ազնութիւն ունեցող պարոններ սկսել են գիւղացու այդ միակ ինքնօգնութեան միջոցը խորտակելու համար։ Ո՛չ մի տարբերութիւն։ Ինչպիսի ինքնօգնութիւն մատուցանեն գիւղացուն։

ջոց ձեռքից բաց չը թողեցին մի քանի պարոններ յիշեալ ընկերութիւնը կամ իրանց շահին ծառայեցնելու կամ հակառակ դէպքում կործանելու, քայքայելու համար։

Եւ այսպէս վարվում են այն պարոնները, որոնք մի քանի ամիս առաջ ահագին ժեժանչիւն ճառեր էին ասում, դասակարգային կռիւ յարուցանում, աշխատաւոր գիւղացիութիւնը կեղեքիչներից (իբր թէ) ազատելու մտքով...

«Գնացէք շուտով ձեր աւանդները յետ ստացէք, որովհետև մեր բանկը շուտով քանդվելու ա, վարչութեան նոր անդամները բոլոր փողերը տակով կանեն»։ Այսպիսի սուտ և անամօթ լուրերով մոլորեցնում էին և շարունակում են մոլորեցնել միամիտ գիւղացի անդամներին, և աշխատեցրին մի շաբթվայ ընթացքում 10,000 ր. աւանդագրամ վերցնել տալ։

Սակայն այդ ոտնձգութիւնները ոչ մի վատ ազդեցութիւն չարեցին, և, ի մեծ զբաղդութիւն այդ չարասիրտ մարդկանց, բանկը ոչ թէ քանդվում է, այլ աւելի ու աւելի է հաստատուն արմատներ բռնում և օգտաւէտ դառնում մեր չարքաշ գիւղացիների համար։

Ի՞նչն է ստիպել զինվել այս փրկարար ընկերութեան դէմ և ստոր դաւեր սարքել։ Մի անմեղ բան, այն՝ որ մի երկու ամիս առաջ կատարված ընտրութիւնների ժամանակ գիւղացի անդամները բացարձակ սև քուէ տուեցին հեղհամբոյր Վաղարշակ Կանայանցին, Արտաշէս Յովհաննիսեանին, իսկ սրանց թայֆայի պարագլուխ՝ տիպիկ ներկայացուցիչ Տիգրան Ղազարեանն էլ մի քուէի առաւելութեամբ միայն ընտրված լինելով՝ ինքը հրաժարվեց, երեք անձով մի ընութիւն կատարեալ անելու համար։

Ես, ինչպէս հիմնադիր նոյն ընկերութեան, ամենայն աչալրջութեամբ հետևում եմ ընկերութեան գործերին, ուստի պարտք եմ համարում յայտարարել մեր անդամներին, որ տարածված լուրերը միանգամայն սուտ են և խարդախների շարադրած հէքիաթներ։ Փոխանակ այդ լուրերին հաւատալու առաջարկում եմ հրաւիրել կողմնակի հասկացող մի քանի անձինք և խիստ քննութիւն կատարել, որով կերևայ արդարն ու մեղաւորը, իսկ մինչև այդ քննութիւնը՝ ոչ մի խօսքի նշանակութիւն չը տալ։

Յովհ. Խօջաէյնաթեանց

Յ. Գ.—Այս ընկերութիւնը անցեալ տարի հիմնվեց 620 ռուբլով, իսկ այժմ, որ տարի ու կէս է միայն գործում, մօտ 40 հազար ր. հիմնական դրամագլուխ ունի և երկրորդ տարվայ շրջանառութիւնը (օբօրօտ) 250 հազարի է հասնում։

Նոյնը

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Քրէական պատժագրքի 129-րդ յօդուածի 1-ին մասի 2-րդ կէտի մեղադրանքով դատարանին է յանձնված վրաց «Մեգօբարի» լրագրի խմբագիր Գր. Ս. Բցխիլաձէին, որը մեղադրվում է այն բանում, որ այդ լրագրի 62-րդ համարում տպել է մի յօդուած՝ «Սօցիալ-յեղափոխականների յեղափոխութիւնը ընտրութիւններին մասնակցելու վերաբերութեամբ» վերնագրով, գիտենալով որ նրա մէջ կոչ է անվում փոխելու և տապալելու գոյութիւն ունեցող պետական կազմը։

Պալատը, քննելով այս գործը 1907 թ. մայիսի 11-ին, արդարացրեց Բցխիլաձէին։ Պալատի դատախազի օգնականի բողոքագրի համաձայն, սենատը, փոխելով պալատի վճիռը, բացատրեց իր վճռի մէջ, որ պալատի դատավճռի կարծիքները տրամաբանորէն հակառում են փաստերին, որոնք շարադրված են պալատի կազմած մեղադրանքի կմէջ։

Պալատը, քննելով երկրորդ անգամ այդ մեղադրանքը, ընդունեց Բցխիլաձէին մեղաւոր մաժուլի գործերի ժամանակաւոր անձնների 7-րդ կէտով և դատապարտեց նրան 100 ռուբլի տուգանքի, իսկ անկարողութեան դէպքում՝ 3 ամիս բանտարկութեան։ Պաշտպանում էր իշխան Բարատովը։

—

Երէկ, ամսի 10-ին, նահանգական դատարանի առաջին քաղաքացիական բաժնում քննվում էր Յովհաննես դպրոցի՝ ինտրիգների զոհ դարձած ուսուցչական խմբի անդամներից մէկի պահանջը յիշեալ դպրոցի վարչութիւնից։ Ինչպէս գիտեն ընթերցողները, նախանցեալ տարի Յովհաննես դպրոցի՝ շարունակ աշխատաւոր ժողովրդի անունով երգող նոր հոգաբարձուները, կամենալով պատժել տեսուչ Լ. Սարգսեանին, իրապէս պատժեցին նրա հրաւիրած ու վարձած խեղճ ուսուցիչներին։ Լ. Սարգսեանը, կաթողիկոսի կարգադրութեան համաձայն, լիովին ստացաւ իր ամբողջ տարվայ ռոճիկը, իսկ զրկվողները եղան միայն ուսուցիչները. ամբողջ տարին անգործ ու անպաշտօն թողած ուսուցիչներին վարձատրելու մասին ոչ օր էլ չուզեց մտածել։ Դրանից մի քանիսը, մասնաւոր հաճախորդների մի չնչին մասը ստացան և մի կողմ քաշվեցին, իսկ մի քանիսն էլ ստիպեցին դատարանին դիմել իրանց պահանջը ստանալու համար։

Այդպիսիներից էր և պ. Ս. Տէր-Գասպարեանցը, որի պահանջը, ինչպէս ասացինք, քննվում էր երէկ դատարանում։ Ինքը պ. Տէր-Գասպարեանը ներկայ չէր, այլ կար միայն նրա հաւատարմատար պ. Ռ. Յովհաննիսեանը։ Յովհաննեան դպրոցի վարչութեան կողմից էլ ներկայ էր պ. Գ. Խաչատրեանը։ Պահանջատէր Տէր-Գասպարեանի կողմից վկայ էր հրաւիրված պ. Ռ. Խանազատեանը։ Սրան մանրամասն հարց ու փորձի ենթարկելուց յետոյ, գործի վերջնական քննութիւնը յետաձգվեց մի ուրիշ անգամի։

Մեզ յայտնեցին, որ զրկված ուսուցիչներից ուրիշ երկու թէ՝ երեք հոգի էլ մտածում են պ. Տէր-Գասպարեանի օրինակին հետևել և դատարանի միջոցով ստանալ իրանց հասանելիք մի ամբողջ տարվայ ռոճիկը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Վերջերս պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքում հաստատվեց մանր կրէդիտի տեսչի նոր պաշտօն։ Մանր կրէդիտի տեսչութեան մօտակայ նպատակն է հանդիսանում կօօպերացիայի գաղափարի իրականացումը երկրագործների, արհեստաւորների, արդիւնաբերողների, առհասարակ արտադրող աշխատանքով զբաղվող ժարդկանց մէջ և նրանց, որոնք կարիք ունեն դրամական միջոցների՝ ստանալու բարելաւելու, մեքենաներ և երկրագործական գործիքներ ձեռք բերելու համար և այլն։ Պէտք է լիակատար աջողութիւն ցանկանալ վարկային և խնայողական-փոխատու ընկերութիւնների հաստատման գործին Թիֆլիսի նահանգում, որի ազգաբնակութիւնը վաղուց պահանջ է զգում այդօրինակ հաստատութիւնների, որոնք հնարաւորութիւն են տալիս իրանց անդամներին օգտվել էժան կրէդիտով։ Ներկայումս փողի կարիք եղած դէպքում, ինչպէս յայտնի է, ազգաբնակութիւնը դիմում է միակ աղբիւրին՝ բարեգործ-վաշխառուներին, որոնք ահագին տոկոսներ են վերցնում իրանց «աշխատանքի» համար։

◆ Կովկասի Փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկովը Թիֆլիսից յունվարի 9-ին մեկնեց որսորդութեան։

◆ Կովկասի գիւղատնտեսական տեսուչը առաջարկել է կովկասեան կայսերական գիւղատնտեսական ընկերութեանը՝ Թիֆլիսի այգեգործական դպրոցի հոգաբարձուի ընտրութիւնը կատարել այդ դպրոցի կանոնադրութեան 16-դ և 24-դ կէտերի համաձայն։

◆ Յունվարի 9-ին, Թիֆլիսի նահանգապետի մօտ տեղի ունեցաւ մի խորհրդակցութիւն, մասնակցութեամբ Թիֆլիսի քաղաքագլուխ իշխ. Զհրքեզովի, քաղաքային վարչութեան անդամներ՝ Ս. Խաչիսեանի և Կօկչաէվի։ Քննվում էր 1908 թ. քաղաքային վարչութեան ծախսերի գումարների հարցը մինչև նախահաշիւի հաստատվելը։

◆ Թիֆլիսի բօրսային կօմիտէն որոշել է արժէքդիների սակագինը (котировка) նշանակել չորեքշաբթի օրերը։

◆ Յունվարի 9-ին, գիշերվայ ժամը 1-ին, կրակ երևաց Խօսրօվի ժառանգների քարվանսարայի մէջ։ Քարվանսարան շինված էր երեք փողոցների վրա՝ Բաղկանի, Պեսկովսկի և Սամանի հրապարակը։ Քարվանսարայում գտնվում էին բազմաթիւ ժանուփակուրային, գոլգի և այլ խանութներ, շատ գրասենեակներ, պահեստներ և բազմաթիւ կենողներ։ Շինութիւնն էլ բաւական հին էր։ Կրակը միանգամից բռնկվեց ամբողջ քարվանսարայում։ Շուտով օգնութեան հասաւ հրշեջներին խումբը, բոլոր չորս շոգենասօսները գործադրութեան հանեցին, բայց անողոք կրակը աւելի և աւելի սպառնական դարձաւ և պատեց ամբողջ շինութիւնը։ Այրվեցին և հարևան տները, այսպէս՝ օրինակ՝ իշխ. Արղութեան-Երկայնաբազուկի, Միրզօևի, Իզմիրովի և Տէր-Ղուկասեանի։ Այս տներում ևս կային շատ արհեստանոցներ, մրգի կրպակներ և պահեստներ։ Ամբողջ Խօսրօևի քարվանսարան և հարևան տները կրակի ճարակ դարձան. կրակը լափեց մինչև վերջին թելը։ Հրդեհի ժամանակ լսվեցին պայթուններ և ճայթոցներ. ենթադրում են, որ կոտրվում էին իւղի թիթեղեայ տակառները։ Խօսրօվի քարվանսարայի վերին յարկում ապրող կանանց և երեխաներին հրդեհաշէջները և ոստիկանութիւնը մէկ-մէկ իջեցնում էին պատուհանից՝ առաջուց դրված ստնդուխի վրայով։ Բարեբաղդաբար մարդկային զոհեր չը կան. բոլորն էլ ազատվեցին։ Հրդեհի պատճառը բացատրում են նրանով, որ քարվանսարայի դռնապան Նիկոլայ Օսկանովը ժաղալի վրա խորոված է խորովելիս եղել։ Նա այժմ ձերբակալված է ոստիկանատանը։ Վնասները միլիօնների են հասնում։ Միայն Մնացականեանի և Աբրամովի խանութի վնասը հասնում է 100,000 ր.։ Ոչինչ կարելի չէր ազատել։ խանութները փակ էին, տէրերը չը կային և մտնելն էլ անհնար էր։ Խօսրօևի տունը ապահովագրված էր «Россія» ընկերութեան մէջ 90,000 ռուբլով։ Ուրիշ տները յայտնի չեն։ Հրդեհը շարունակվեց մինչև միւս օրվայ ցերեկվայ ժամը 4-ը։ Հրդեհի տեղը եկան իշխանութիւնները։ Կրակի թոցած տեսարանը սոսկալի է։

◆ Յունվարի 13-ին Զուբալովի տան հակիչ քաղաքային մասնաժողովը Զուբալովի ժառանգներից կընդունէ այդ շէնքն իր իշխանութեան ներքոյ։

◆ Կիրակի, յունվարի 13-ին, ցերեկվայ ժամը 12-ին, տեղի կունենայ հայոց էժանագին ճաշարանների անդամների ընդհանուր ժողովը։ Ժողովը կը կայանայ՝ որքան թւով որ անդամներ ներկայ լինեն։

◆ Յունվարի 9-ին ոստիկանութիւնը զինուորական պահակախմբերի հետ ուժեղ խուզարկութիւններ կատարեց քաղաքիս 4-րդ և 7-րդ թաղամասերում։ Խուզարկութեան հետևանքը յայտնի չէ։

◆ Թիֆլիսի քաղաքային դումայի հեռաւել նիստը նշանակված է երկուշաբթի, յունվարի 14-ին, երեկ. ժամը 7-ին։

◆ Թիֆլիսի ոստիկանապետ գնդապետ Ցիխօցկին քաղաքային վարչութեանն է ուղարկել իր կազմած այն լրացուցիչ կանոնները, որոնք վերաբերում են բեռնակիր կառքերին։ Ոստիկանապետը վարչութիւնից խնդրում է այդ կանոնները քննութեան համար ներկայացնել քաղաքային դումային։

◆ Թիֆլիսի նահանգական ընկերակցութիւնների գործերի վարչութիւնն օրինականացրել է հետևեալ ընկերութիւնները. 1) «Թիֆլիսի պակի գանձարկղ», որ նպատակ ունի միանուագ դրամական օգնութիւն հասցնել իր անդամներին, երբ կը պակվին, 2) «Ծնունդներների IV Թիֆլիսի կասսա», որ նպատակ ունի շահեկան պայմաններ ստեղծել Թիֆլիս քաղաքի ծննդկան կանանց համար և օգնութեան հասնել նրանց նիւթական տեսակէտից կատուած որ նրանք ցոյց կը տան, 3) «Ծնունդների III Թիֆլիսի կասսա», որ նպատակ է դրել միանուագ դրամական օժանդակութիւն հասցնել իր ծնունդկան անդամներին։

◆ Սատացանք Ա. Ահարոնեանի, «Արցունքի հովիտը», դրամա 4 գործ., գինն է 35 կօպէկ։

◆ Գէօրգի Ֆիլիպովիչ Միկաձէն դիմել է Թիֆլիսի նահանգապետին, խնդրելով թոյլատրել՝ հրատարակել Թիֆլիսում ամենօրեայ քաղաքական և գրականական լրագիր վրացերէն լեզուով «Մերցխալի» (Ծիծեռնակ) անունով։

◆ Կիրակի, յունվարի 20-ին, Թիֆլիսում լոյս կը տեսնէ ռուսերէն լեզուով «Жизнь» քաղաքական լրագրի առաջին համարը։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը դիմել է 3-րդ թաղամասի ոստիկանական պրիստաւին, խնդրելով անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել անասունների գաղտնաբար մորթելու առաջն առնելու համար, որով պարապում են շատ մսագործներ այդ թաղամասում։

◆ Արաքսեանցի հիւանդանոցը արդէն կառուցված է, Թիֆլիսում, բայց նրա բացումը հաղիւ թէ տեղի ունենայ ժամանակ

Հայհոյեցէք, որքան կամենաք. փաստը կը մնայ փաստ իր բոլոր մերկութեամբ։

Դաշնակցութիւնը ներս է ընկել միջազգային սոցիալիստական կոնդրէսը կեղծիքով։

Ահա այդ անդրդուելի, անհերքելի փաստը։ Իսկ ձեր խուսափումը՝ հասկանալի է ըստինքեան։

Bolt

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԲՕԼԳԱՐԻԱ

Սարաֆօվի եւ Գարվանօվի սպանման գործի առիթով բօլգարական դատական իշխանութեան կողմից բացված քննութիւնը նորկայումս վերջացել է։ Իբրև գլխաւոր յանցաւորներ մատնանշվում են հետեւեալները, որոնց ձերբակալման համար՝ ողջ կամ մեռած՝ հարկ եղած կարգադրութիւններն արված են. 1) Եանի Սանդանսկի՝ 35 տարեկան, 2) Զուգօվիր Կանթարջիեվ՝ 25 տ., 3) Ալէքսանդր Բույնօվ՝ 29 տ., 4) Թօդօր Պանիցա՝ 28 տ.։ Բացի յիշեալներից, երբև գլխաւոր յանցաւորներ, ձերբակալված են 1) Զերնօպէյեվ, 2) Պէար Պօպ Արսով և 3) Բրնտի Բլգարիատա։ Այս գործի առիթով ոստիկանութեան ձերբակալած բազմաթիւ անձերն ազատ են արձակված։

Ֆերդինանդ իշխանի կրկնամուսնութիւնը.—Վիէննայից, դեկտ. 16-ից, հեռագրում են, թէ բօլգարական իշխան Ֆերդինանդը սոյն տարվայ փետրվարի 15-ին պիտի ամուսնանայ Աւստրիայում։ Նրա ամուսնութիւնը կը կայանայ Վիէննայի մօտ՝ Էրնըստբրունի մէջ։

ԹԻՒՐՔԻԱ

Ֆեհիմ փաշայի մահը.—Պաշտօնապէս հաղորդվում է, թէ Դիարբէքիրի նախորդ վալի Ֆէհիմ փաշան, որ Կ. Պոլիս էր կանչված Միլլի Իբրահիմ փաշայի ապստամբական գործի առիթով բացատրութիւն տալու սուլթանին, ճանապարհին մեռել է։

Դեռութիւնը Կ. Պոլսում.—Կ. Պոլսից հաղորդում են, որ դրութիւնն այնտեղ շատ երկիւղալի է։ Կառավարութիւնն անօրինակ խստութիւնների է դիմում, որպէսզի այն կարևոր ցոյցը, որը հաւանականօրէն մօտ ժամանակներս կատարվելու է երզրումցի թիւրքերի կողմից, տեղի չունենայ։ Խուզարկութիւններն ու ձերբակալութիւնները բազմացել են երզրումցի թիւրքերի շրջանում։ Վերջերս յամառ լուրեր են շրջում սուլթանի հիւանդութեան մասին։ Հաւատացնում են նոյնիսկ, որ նա շատ ծանր է։

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

(Հեռագրական)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունվարի 6-ի երեկոյեան բազմամարդ նիստում փակված յայտարարվեց ժողովրդական համալսարանների գործիչների համառուսական առաջին համագումարը։ Համագումարի բիւրօի տեղեկութեան հաստատելու, նիստերին մասնակցում էին 478 անդամներ. քննվեցին 61 զեկուցագրեր. ընդամենը ներկայացված էր 101 զեկուցագիր։ Հետեւեալ համագումարը մտադրութիւն կայ գումարել Մոսկվայում 1909 թ-ին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երկարեցվեց Պետերբուրգի և Պետերբուրգի նահանգի արտակարգ պահպանութեան ժամանակամիջոցը։

Երկարեցվեց ուժեղացրած պահնորդական դրութիւնը Խալէբսկի, Ուստ-Մեդվեդիցկի, Երկրորդ Դոնի, Դոնեցկի և Բաստուվի վիճակներում և Դոնեան զորաց շրջանում։

ՕԴԵՍՍԱ։ Շրջանի զօրահրամանատարի կարգադրութեամբ Օդեսայի քաղաքապետ գեներալ Տօլմաչիվը նշանակվում է Օդեսայի ժամանակաւոր գեներալ-նահանգապետ։

ՄՕՍԿՎԱ։ Ժամանեց սենատօր Գարինը՝ Մոսկվայի քաղաքապետութեան գործերը սենատորական քննութեան ենթարկելու համար։

ԼՕՆԴՕՆ։ Ռէյտէրի գործակալութիւնը մի քանի տեղեկութիւններ է յայտնում եւրոպական 1908 թ. բիւջէի մասին։ Սովորական եկամուտները կազմում են 476 միլիոն լէն, արտակարգ եկամուտները՝ 140 միլ. լէն, սովորական ծախքերը՝ 142 միլ. լէն, արտակարգ ծախքերը՝ 189 միլ. լէն։ Երկու դէպքերում գումարները նոյնն են, ինչ որ անցեալ տարի։

ԲԵՐԼԻՆ։ «Համաձայն «Աստիեստէս-Պրէս» լրագրի ստացած տեղեկութիւնների, Բիս-դը-Ժանէյրօյում աջողվել է բանալ անիշխանական դաւադրութիւն, որ նպատակ է ունեցել ոչնչացնել ամերիկական նաւատորմիղի մասերը։ Դաւադրութեան միտքը լրզացել է Պետրօպօլիսում։ Մեղադրեցիներից մի քանիսին որոնել են նաև Սան-Պաուլօյում և Մինասգերէս նահանգում։ Պարագլուխ համարում են ոմն Ֆետխէրին, որ ապրում է Պետրօպօլիսում։ Բրազիլիայի կառավարութիւնը պաշտօնական նօտայով ազդարարում է, որ, նախքան ամերիկական նաւատորմիղի գալուստը, նա տեղեկութիւններ ստացաւ Պարիզից և Վաշինգտօնից՝ թէ զանազան ազգութիւնների անիշխանականները դաւադրութիւն են կազմել ամերիկական զինուորական նաւատորմիղի դէմ, բայց և նախօրօք ձեռք առնվեց բոլոր անհրաժեշտ միջոցները այդօրինակ մտորումների առաջն առնելու համար։

Հաղորդում են նաև, որ Բիս-դը-Ժանէյրօյում ձերբակալել են մի քանի օտարազգիների։

500-ական բուբլի տարած խաղարկու տոմսերը.

11677	34	12723	42	15620	41
19161	36	11593	36	14372	13
5776	39	5039	17	4631	26
16726	22	13509	2	19101	27
19713	19	9125	21	15243	9
4979	2	14582	40	10656	20
15825	33	17718	6	18154	46
18300	49	3304	48	17667	41
5586	19	6443	50	19981	47
1797	46	332	7	18114	26
11397	26	18094	32	10139	1
8648	9	17533	35	6581	35
11128	20	5263	23	411	14
16616	47	15880	31	19051	1
13927	6	14951	19	4531	44
2261	30	15407	25	12025	6
3434	13	3412	4	5161	49
1577	9	1885	9	9215	14
11347	10	19720	7	4759	26
6708	24	9969	12	18640	40
6364	25	1283	47	14785	22
3830	46	5264	33	12794	24
1683	46	647	20	10584	48
685	13	300	6	4087	14
3867	1	15129	29	16279	30
6704	21	2294	20	4173	26
17465	24	403	20	6887	9
6146	4	3586	39	525	29
17992	6	2649	34	13948	45
19214	44	16203	33	9210	35
7741	28	6434	8	9131	31
8954	19	10392	37	120	40
4425	24	15350	41	13619	23
19615	2	6448	10	16487	10
14037	10	15812	33	202	1
14803	35	7313	36	731	7
8052	11	19692	7	583	20
215	18	12822	30	2484	33
220	39	441	35	8887	2
2849	18	9525	16	13361	39
7062	36	6021	9	10783	35
6440	46	17234	7	13419	34
7428	14	12801	3	8926	41
15644	49	838	25	13833	34
14885	42	16562	25	12285	9
3631	10	4441	40	15563	21
16140	40	208	34	17381	12
4983	50	16108	15	13704	44
9571	23	1150	22	3369	47
18921	5	12537	13	2313	44
7716	28	18075	46	7908	47
1579	41	326	22	12253	1
756	34	4143	33	2841	27
8923	8	3717	15	16418	35
7382	43	5411	49	18067	11
6692	8	7153	12	5172	4
5120	46	6896	25	6196	47
8650	13	9657	24	1796	18
6422	34	179	8	17830	6
12040	25	15971	45	15314	28
11003	37	10849	38	19749	5
18395	17	4512	46	19509	3
19415	27	13325	1	12436	12
3742	30	15505	5	5845	46
14889	6	19561	12	2565	50
3915	15	3606	25	4693	42
2311	24	16922	39	2571	1
12617	39	17426	42	7449	32
9411	5	18775	8	644	9
18638	1	1059	38	11280	35
952	39	14485	9	663	24
15887	25	16582	44	964	42
2625	31	3592	14	19354	46
3909	11	1470	47	19934	45
5600	46	6154	47	5472	46
5215	19	9464	46	17423	16
16397	31	14033	20	3450	33
8215	45	3152	33	13984	36
19052	27	12580	9	15953	29
19986	31	19729	15	12321	21
58	2	13661	15	16324	24
8201	2	15518	3	19245	7
11962	17	10478	8	10356	29
1968	24	13097	34	1356	20
12171	50	6593	14	3835	27
1163	46	16624	10	123	5
7392	45	9697	37		

Հանգուցման տիրաժ են դուրս եկել սերիաների հետեւեալ համարները.

2199, 737, 3452, 13896, 13084, 8405, 14112, 16343, 8, 15781, 12546, 14719, 3462, 7475, 5164, 17751, 18808, 9641, 12433, 17230, 2055, 8798, 6918, 1292, 12745, 1462, 12211, 5504, 17963, 9801 6312, 17717, 19343, 5309, 6854, 9151, 4161, 5068, 441, 10303, 9845, 2567, 9017, 8313, 9910, 17442, 19897, 9688, 7946, 326, 9458, 11469, 15873, 12396 13944, 18326, 3028, 12763, 4973, 4739, 384, 2452, 14057, 18358, 14398, 16102, 9446, 12397, 4280, 1150, 19484, 15487, 19344, 14782, 1852, 6167, 18398, 8364, 4782, 17414, 2709, 4018, 17293, 15032, 9011, 13619, 15156, 18396, 12368, 14068, 10917, 16103, 13232, 4514, 8382, 6990, 16482, 19296, 8248, 10492, 6319, 2926 14231, 15568, 6001, 15576, 5787, 19571, 14281, 8525, 1120, 5700, 13740, 4693, 8722, 18848, 2981, 7037, 15947, 9657, 2879, 4026, 37, 18817, 16837, 8408, 8987, 17715, 3407, 1813, 18062, 8213, 11874, 11219, 2914, 8136, 19086, 15788, 4226, 13856, 8777, 2397, 4742, 16843, 7175, 12024, 5842, 4750. 4953, 18297, 9761, 18221, 16732, 701, 5766, 9908, 15339, 5750, 4513, 19817, 1248, 1946, 11572, 9974, 2002, 7073, 1094, 2569, 15575, 6645, 16043, 11503, 10872, 6730, 4355, 10945, 13627, 14669, 676, 17196, 15174, 18830, 18253, 8644, 19574, 4645, 16949, 6601, 3682, 13639, 6557, 19867, 7244, 7208, 7893, 8070, 6363, 3880, 9896, 15837, 15174, 5471.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱԶԱՏՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԶԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Հրաւերները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ

ԲԱԳՈՒ (Գանձակ, Եւլախ)
Արագ—գիշ. 12 ժ. 28 ր., Գանձակ—գիշ. 5 ժ. 42 ր., Եւլախ—առաւ. 7 ժ. 19 ր., Բագու—ցեր. 2 ժ. 43 ր.։ Պօստ.—երեկ. 9 ժ. 41 ր., Գանձակ—գիշ. 4 ժ. 13 ր., Եւլախ—առ. 6 ժ. 27 ր., Բագու—ցեր. 5 ժ. 39 ր.։ Մարդատար—ցեր. 7 ժ 53. ր., Գանձակ—ցեր. 2 ժ. 10 ր., Եւլախ—ցեր. 4 ժ. 21 ր., Բագու—գիշ. 1 ժ. 50 ր.։

ԲԱԹՈՒՄ (Գօրի, Միխայլօվո, Ռիօն)
Մարդատար (№ 7).—առ. 10 ժ. 58 ր., Գօրի—ցեր. 1 ժ. 30 ր., Միխայլօվո—ցեր. 2 ժ. 58 ր., Ռիօն—երեկ. 7 ժ. 21 ր., Բաթում—գիշ. 12 ժ. 10 ր.։ Պօստ.—առ. 9 ժ. 15 ր., Գօրի—ցեր. 11 ժ. 49 ր., Միխայլօվո—ցեր. 1 ժ. 19 ր., Ռիօն—երեկ. 5 ժ. 47 ր., Բաթում—գիշ. 10 ժ. 45 ր.։ Մարդատար (№ 5)—գիշ. 11 ժ. 22 ր., Գօրի—գիշ. 1 ժ. 57 ր., Միխայլօվո—գիշ. 3 ժ. 20 ր., Ռիօն—առ. 7 ժ. 41 ր., Բաթում—ցեր. 12 ժ. 27 ր.։

ԵՐԵՒԱՆ (Ալէքսանդրօպօլ)
Ապր.-մարդ.—ցեր. 3 ժ. 16 ր., Ալէքսանդրօպօլ—գիշ. 2 ժ. 30 ր., Երևան - Ուլուխ. առ. 8 ժ. 22 ր.։ Պօստ.—գիշ. 1 ժ. 8 ր., Ալէքսանդրօպօլ—ցեր. 11 ժ. 53 ր., Երևան—Ուլուխ.—ցեր. 5 ժ. 35 ր., Նախիջևան—գիշ. 12 ժ. 32 ր., Զուլֆա—գիշ. 2 ժ. 35 ր.։

ԲԱԹՈՒՄԻՑ (Պետերբուրգի ժամանակով)
Մարդատար—առ. 4 ժ. արագ.—ցեր. 4 ժ. 4 ր.։ Պօստ.—ցեր. 11 ժ. 23 ր.։

ԲԱԹՈՒՄԻՑ—Մարդ.—առ. 10 ժ. 38 ր.։ Պօստ.—առ. 6 ժ. 49 ր.։ Մարդատ.—ցեր. 5 ժ. 46 ր.։

ԵՐԵՒԱՆ-ՈՒԼՈՒԽԱՆԼՈՒԻՑ — Պօստ. — առ. 1 ժ. 58 ր.։ Ապրանք.-մարդատար—գիշ. 1 ժ. 50 ր.։

ԶՈՒԼՖԱՅԻՑ—Պօստ. գիշ. 4 ժամին։ Մարդ.-ապրանք.—ցեր. 3 ժ. 21 ր.։

ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ — Պօստ.—7 ժամին Մարդ.-ապրանք.—6 ժ. 58 ր.։

Հրատարակութիւն Գ. Գալստեանի, № 26.

ԱԳՕԼՓ ՌՈՒԴԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ՄԵԹՕԴԻԿԱ
Փոխադրեց գերմաներէնից
Յովհաննէս Տէր-Միրաքեան
Գինն է 1 ր. 50 կ.
Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ", Г. И. Галустянцу.
3—1

Պր. Ա. ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑ
«Բուսական աշխարհից»
Նպաստ հայ գիւղատնտեսութեան
ՆԵՐԿԱՏՈՒ ԲՈՅՍԵՐ
եւ
Դրանց ներկերը—հին հայկական եղանակով պատրաստելու ձեւը։
Գինն է 25 կօպ.
Ծախվում է բոլոր գրավաճառանոցներում։
(ու.) 10—10

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ամսոյս 13-ին, առաւօտեան 11 ժամին, Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցում լինելու է ծխականաց առաջին ընդհանուր ժողով, նոր երէցփոխի ընտրութիւն կատարելու համար, որի մասին յայտնելով նոյն եկեղեցու երկսեռ ծխականներին՝ խնդրում եմ որոշած օրը և ժամին ներկայ լինել ժողովին՝ ընտրութեանը մասնակցելու։

Թիֆլիսի հայոց եկեղեցիների Բ. մասի գործակալ՝
Ղեւոնդ քահ. Մատիկոնեանց
(ու. շ.) 1—2

Լոյս տեսաւ
Ա. Ս. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ
„ԵՐԳԵՐ ու ՎԷՐՔԵՐ"
Բանաստեղծութիւնների ժողովածուն.
ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ
Գլխաւոր պահեստը Թիֆլիս, գրավաճառանոց «Գուտտենբերգ»։
5—3

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց, առանձնապէս սաստմոսի եւ աղիքների հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր | 12—1 ժ. առաւօտեան 5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց տ. Ճավճավաձէի № 36.
(ա.օ.) 100—83

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզալին, վենէրական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33։
(ա. օ.) 160—83

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
(Ջեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար)
Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ
Գինն է 1 ր. 50 կ.
Միքայէլեան փողոց № 138
20—16

ОТКРЫТА ПОДПИСКА
на 1908 годъ
на ежедневную, общественно-литературную и политическую газету
„КАСПІЙ"
(XXVIII годъ изданія)
Адресъ: Николаевская ул., соб. домъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА
Для городскихъ: на годъ 7 р. 05 к., на 6 мѣс. 4 р., на 3 мѣс. 2 р. 50 к., на 1 мѣс. 1 р.
Для иногороднихъ: на годъ 8 р. 55 к., на 6 мѣс. 5 р., на 3 мѣс. 3 р., на 1 мѣс. 1 р. 50 к.
За границу: на годъ 13 р., на полгода 7 р., на 1 мѣс. 2 р.
3—1

Ներքին գործերի մինիստրութեան իրաւասութեան տակ գտնվող
→ ԱՌԱՋԻՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ←
ՍՏԵՆՕԳՐԱՖԻԱՅԻ (ՄՂԱԳՐՈՒԹԵԱՆ) ԿՈՒՐՍԵՐ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅԱԿՈՎԲԵԱՆԻ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Դասաւանութիւնը լինելու է ուսերէն լեզուով թէ կուրսերում և թէ նամակագրութեամբ երկու սեռի անձանց համար։ Զբաղմունքները կը լինեն երեկոները։ Ընդունելութիւնը յունվարից առաւօտ. 10—1 և երեկ. 4—7 ժ.։ Պարապմունքները ընդունելութիւնը յունվարից առաւօտ. 10—1 և երեկ. 4—7 ժ.։ Ծրագիրը և պայմանները ուղարկվում են ձրի։ Աւարտողներին տրվում է ատստատատ։
Гановская ул., 7.
2—2

Բացված է 1908 թ. սնապայման կանխիկ բաժանորդագրութիւն
ԱՂԲԻՒՐ ԱՂԲԻՒՐԻ նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և սուտ-լութիւն դէպի չարն ու գեշակարը։
ԱՂԲԻՒՐԸ իր մատաղ ընթերցողների սրբերում ցանում է գթութիւն, ինքնանվիրաբերութիւն, անվեհերութիւն սիրմբ։
ՏԱՐԱԶ ԱՂԲԻՒՐԻ հատուցացած սանների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացումների թարգմանը։
ՏԱՐԱԶԸ ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտված, գիտութեան անշէջ լուսով զարդացած, հայրենասիրութեամբ բորբոքված հայ անդամներ մնուցանել։
ՏԱՐԱԶ
XXVI մանկական պատկերազարդ ամսագիր և XIX պատկերազարդ, երկշաբաթաթերթ Բաժանորդագրութիւն — Աղբիւր 3 ր. (արտասահման 5 ր.) Տարազ—6 ր. (արտասահման 10 ր.), Աղբիւր-Տարազ, յաւելուածներով 10 ր. (արտասահման 50 ֆր.)։ Տարազի առանձին №-ը 50 կ., Աղբիւր-Տարազ փղոսկրեայ թղթի վրա 100 ր.։
Խմբագրատունը՝ Թիֆլիս, Մագաթեան փող., տ. № 5, բաց է ամեն օր. (բացի կիրակի և տօն օրերից) առ. 10 ժ. մինչև 2-ը կէսօրից յետոյ։ Հասցէն՝ Тифлисъ, ред. Тараз. Rédaction du journal Taraz. Տէլէֆոն № 282, Caucase, Tiflis.
Աղբիւր և Տարազ հանդէսները կը հրատարակվեն այնքան №№ և այն ծաւալով, որքան կը թերագրէ վճարող բաժանորդների թիւը.
3—3

Բացված է բաժանորդագրութիւն 1908 թ. (առաջին տարի)
ՆՈՐ-ԱՇԽԱՐՀ
Գրական, բարոյական եւ հասարակական պատկերազարդ շաբաթաթերթի
(Ազատամիտ անկուսակցական օրգան)
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ
Ռուսաստան . . . . . 4 բուբլի
Արտասահման . . . . . 5 բուբլի
Առանձին համարը ամեն տեղ 10 կ.
Տարեկան բաժանորդ գրվողները կը ստանան ՁՐԻ ՊՐԷՄԻԱ
ՆԱԽԻՇՏԻ ՕՐԱԳԻՐԸ
Օգտաւ Միրբօյի յայտնի և հետաքրքիր գրուածքը, շքեղ հրատարակութիւն, ԱՌԱՆՁԻՆ ԱՐԺԷ 1 Ր. 50 Կ.
«Նոր-Աշխարհում» կը տպագրվեն յայտնի փիլիսոփաների գրուածքները և կենսագրութիւնները՝ Նիցշէի, Հեգելի, Սպինօզայի, Շոպենհաուէրի, Պրուտօնի, Բակունինի, Տօլստոյի, Կրապոտկինի և ուրիշների։
Յունվարի սկզբից կը տպագրվի իտալացի յայտնի հրապարակախօս և երգիծաբան ԳՕԼԻԱՐԴՕՅԻ
«ԱՐԿԱԾՆԵՐ ԼՈՒՄՆԻ ՎՐԱ» (ֆանտազիան)
«Նոր-Աշխարհում» կը տպագրվեն գեղարուեստական նկարներ, հասարակական գործիչների պատկերներ և մանրանկարներ։
«Նոր-Աշխարհին» աշխատակցելու են որոշ ուղղութեան գրողներ։
Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, редакція журнала «Норъ-Ашхаръ» Водоподъемная ул. № 8 (Чугуретъ).
Խմբագիր-հրատարակիչ՝ ԳՐԻԳՈՐ ՃԷՊԷՅԵԱՆ
(ու. ե.) 4—4

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мугдусіанцовъ съ С-ми. Большая Ванкская т. д. Семинаріи № 3